

Մանաւոր դիտողութեան արժանի է, ինչպէս կը գրէ մեր թղթակիցը, Աթուղիկոսական հրովարտակը, որուն մէջ կ'ըսէ Վեհ. Ապարը, թէ Ղեւ աշխարհը և էս հասարակիցի. և իբրևրբեմ յաճեալալիս Մարտի, որ քայ Ղեւ կարողութիւնն Աշխարհ և եկեղեցւոյ օգործութեան և գործելոյ: Հրովարտակին շնորհակալութեան արժանի է, և շորս կողմը հայկական նշաններով զարդարուած. վերի կողմի մէջսեղը կը տեսնուի խաչ, գեղարդ եւ այլն. մէկ անկիւնը սրբոյն թաղաբնակի եւ միւս անկիւնը սրբոյն Քարդողիմասի պատկերները. առաջնոյն տակ սուրբ Արիստի Եւստակիոսի պատկերը և երկրորդին ներքեւ սուրբ Մեսրոպոսի պատկերը կը տեսնուին, Վանն Աստուծոյ գրօշը, Քրիստոսի դաստառակը եւ այլն:

Ըւտակ Գեր. Մակար Արքայական արքեպիսկոպոսի խօսեցած ատենարանութեան օրինակը:

«Ինչ ՚ի շնորհաբեր դարուստ ծայրագոյն Պատրիարք Աթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն Գեորգեան և Մարտի ՚ի քաղաքն Տիփլիս:

«Թող սուք ինձ, Աստուածընտիր Հովուապետ, խորին ակնածութեամբ մատչել յայս հանգէս շնորհաբեր եկաւորութեան Չեր ՚ի տիրախնամքս զարքս, և հրատարակել յունկն որդւոց հայրենեաց զայցելութիւն վերնախորհում Տեսչութեանն երկնից՝ տալով մեզ զազգասէր Հովուապետք բարի ՚ի միսթարութիւն տխուր սրտից որդւոց մօրն լուսոյ Աթուղիկէ սրբոյ Ղեւ միածնի, Այցելութիւն ասեմ տեսչութեան երկնից՝ որոյ նախասահման տնօրէնութիւն այն կեդրոնացուցիք ՚ի Վերարժանութեան Չերում գլխազօր

ձայն և զհամակրութիւն ազգի իբրեւ հաւատարիմ վկայի՝ ընտրեցեալ գործ Վեհիգ ՚ի Տեառնէ յայդ վսեմ պատիւ մեծ Քահանայապետութեան Հաստանեացս եկեղեցւոյ, առ որ աւանայն զգացուն սիրտ գտանէ այն հրաշացեալ ՚ի մեզ զմարդարեակոսն անստերիւր խոստովանութիւն. «Մեծ արար տէր զանննն իւր ընդ մեզ, և մեք եզար բերկեալք » . Սուր. ճԻԵ. 4:

Աւ յիբաւի եթէ առցաք ՚ի կը ըստ ազատութիւն խորհրդոց զմանրակը շու հանգամանս եկեղեցական կառավարութեանց, զտարտամ գրութիւն հոգեւորական վսեմ գործոց, և զազգասպառ ինդիր ժողովրդեան ՚ի հօտասէր Հովուապետէդ վասն բարութեան եկեղեցւոյ իւրոյ սրբոյ, յանհնարիցն է շտատովանել, Հայրապետ մեծ, թէ տակաւին հաշտ ակամբ հայի Քարձրեայն ՚ի նուիրական տեղի իջման Միածնի իւրոյ և ՚ի բնագաւառն Հայաստանի: Աստի առ ՚ի նախանձելի բաղանց հանգիտացուցանելոյ զայն Չերք ըստ օրինակի հարցն մերոց առաջնոց, այսօր կայեալ զաջոյ ձեռանէ Չերմէ ՚ի խորհուրդս իւր առաջնորդէ, և փառօք ամեալ զՉեզ յարեւմտից յարեւելք՝ բանոց Չեր առաջի զասարեղ չքնալ մեծարարութեանց, ՚ի նորոգութիւն փառաց Տաճարին սրբութեան, ՚ի բարեկարգութիւն հոգեւորական վսեմ գործոց, և ՚ի յառաջադիմութիւն ազգային հոգեւոր գործոցս բացելոց ՚ի թեմն և ՚ի քաղաքս. յորս ըստ սուեալ Չեզ ՚ի վերուստ հոգեկան զօրութեանց՝ բրբտամբ չափ ձգնելոց էք ՚ի կործանումն խաւար տգիտութեան: Ահա ակնկալութիւնն Հարսին անարատի խօսեցելոյն Չերում անախտ Փեսայութեան. ահա այսօրիկ էին, զորս զայցան մեզ անցեալ ժամանակք, և զորս յուսոյ

ընդհանրութիւն ազգի ՚ի Չեզ տեսա-
նել պատկառութեալ : Անք հաւատամբ
Տէր, զի կամեն Չեր է դորձ կատար-
եալ վասն բարօրութեան համազգա-
յին եկեղեցւոյ . ուրեմն ձեզ մնայ
վճուել զակնկալութիւն նորին , Չեզ
մնայ արդարացուցանել և մինչ խստա-
գրաւել զհամակրութիւն ժողովրդեան
յոժանդակութիւն հանրաշահ խոր-
հրդոց և կամոց Չերոց :

Այլ դուք, հանդիսակից ժող-
վուրդք, որում անհամբերութիւն հոգւոյ
սպասէիք . ահա Հայր մեր և Տէր հա-
գեւոր . ահա Հովուապետ բարի մեզ
հովուացս և ձեզ հովուեցերոց . ահա
գոյ ամբառնալ յառաքելական Աթոռ
նախահայրապետին մերոյ սրբոյն Վրի-
գորի մեծի և բարձրացուցանել զազգ
և ղեկեղեցի ՚ի պատիւ և ՚ի փառս :
Ապաքէն յառաջ մատիք ձայնակցել
ընդ իս՝ ասելով . Օրհնեալ եկեալք ան-
ուամբ Տեառն . Օրհնեալ է շնորհա-
բեր գալուստդ յանուն հօր մերոյ սրբ-
բոյն Վրիգորի Առաւորչի . Օրհնեալ
Քրիստոսապակեալ Արցախն ամենայն
Ռուսաց Աղէքսանդր Աթիորցե վեջ , որ
յատուկ առանձնաշնորհութեամբ իւ-
րով առ ազգս Հայոց նշանաւորեաց
վասն մեր քոյս որ բարերջանիկ . Օրհ-
նեալ և բարձր իշխան Փոխարքայն Ար-
կասեան սահմանաց Արիսոյցէլ Աթիոր-
ցե վեջ , որոյ անգարձ միջնորդութիւն
երջանիկանց այսօր Հայաստանեաց ե-
կեղեցի վայելելով զառատագութ ջը-
նորհա Ներնակալին ամենայն Ռուսաց .
որովք արգարեւ մեծ արար Տէր զառ-
նելն իւր ընդ մեզ , և մեք եզար և ե-
զիցուք բերկրեալք . այժմ և միշտ և
յաւիտեանս :

յ 7 Ապրիլ 1867 թի , ՚ի վանայ
Սայր եկեղեցւոյ Հայոց Տէրիս :

Համա-օր Դասնո-իւն հասարոյ , որ
1828 ին-ի նրարապէցա- ի Դիմայ Առ-
սա-որչիւն եկեղեցւոյն հոռութեան Հա-
յոյ ինքորոյն պարմաւս :

Նախորդ մարտի և ապրիլի ամա-
թերթերով հրատարակուած հոգեւոյս
Պօղոս Պատրիարքի մէկ ասեմարանու-
թեամբը ճշմարտա նկարագիր մի տը-
ւինք ներկայ դարուս առաջին քառոր-
դին մեջ պատահած Առաւորչական
և Հռովմէական Հայոց կրօնական վե-
ճերուն . որոնց մանրամասն սրարագա-
ները ժամանակագրաց թողով , հոս
կ'ուղենք հրատարակել Առաւորչա-
կան ուղղափառ եկեղեցւոյս կողմանէ
յօրինուած հաւատոյ դաւանութիւ-
նը , որում պատճառ տուած են Հա-
յոց եկեղեցիներն բաժանեալները : Աւ-
սրն զի՝ 1828 ամին երբ ՚ի Վուսթր
տիպուեցաւ իւր հրամանին հակառա-
կողներուն դէմ չարաչար բռնութիւն
ներ բանեցրնել , ինչպէս որ գուշա-
կած էր հոգեւոյս Պօղոս Պատրիարքը
իւր վերջիշեալ ասեմարանութեանը
մէջ , բաժանեալ կողմը սկսաւ կրից
զայբութեն ու սրտին կակիճէն Հայե-
րը հերետիկոս են կանչել , և ուրիշ
քրիստոնեայք եւս աննցմէ լսելով ա-
նոնք ալ սկսան գայթակղիլ Առաւոր-
չական եկեղեցւոյն ուղղափառութիւն
վերայ : Ասան որոյ այն ժամանակի մեր
լուսաւորեալ ազգայինք հաւատալեաց
մէջ իրենց ունեցած ուղիղ խոստովա-
նութիւնը ճշմարտաւէր օտարաց ա-
կանջին հասցրնելու և զանոնք տարա-
պարտ մեղքէ և գայթակղութենէ և
անմեղ Ակեղեցին եւս զրոգարտութե-
նէ ազատելու համար փութացին այս
օրինակ դաւանութիւն տալ ընդհա-
նուր քրիստոնէութեան զիմաց , իցոյց
ուղղափառութիւն առաքելական սուրբ
եկեղեցւոյս Հայաստանեաց : Յիշեալ